«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

_____ Հ.Հովհաննիսյան /

17 հուլիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

Գագիկ Զարմավիրի Բաղդասյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» *թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի 11.07.2024թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 15):

Քննարկմանը մասնակցում էին «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Հակոբջանյանը, ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ. Սարգսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ի. Վարդանյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Ս. Սարիբեկյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ. Համբարձումյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Վ. Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ս.Ալեքսանյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Է. Միրզոյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Գալստյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Ն. Ասրյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Գ. Գյոզալյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Ա. Բարխուդարյանը, տ.գ.թ., ասիստենտ

Կ.Հ. Թոմիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Ն.Յու. Կոստանյանը և ասիստենտ Ա.Ֆ. Մկրտչյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքային քաղաքականությունը միտված է երկրի տարածքային միավորների զարգացմանը համաչափություն հաղորդելուն, սակայն գործնականում անհնար է պատկերացնել իրավիճակ, երբ որևէ երկրում տարածքային զարգացման անհամաչափությունները կլինեն ամբողջությամբ հաղթահարված: Սա ենթադրում է, որ երկրում իրականացվող տարածքային քաղաքականությամբ նպատակադրվում է մեղմել տարածքային զարգացման առկա անհամաչափությունները:

Սակայն նույնիսկ անհամաչափությունների նվազեցումը կոմպլեքս և բազմաբաղադրիչ գործընթաց է: Այս հանգամանքով պայմանավորված՝ այդ քաղաքականությունը շատ երկրներում հաճախ աչքի չի ընկնում արդյունավետությամբ: Խնդիրը հատկապես հրատապ է զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրներում, երբ արդեն իսկ առկա անհամաչափությունները հաճախ ընդլայնվում են:

Նմանօրինակ իրավիճակ է նաև Հայաստանի Հանրապետությունում, երբ մարզերի և մայրաքաղաք Երևանի զարգացման մակարդակները տարեցտարի ավելի են տարբերակվում:

Այս դեպքում իրապես առկա է անհրաժեշտություն առաջադրելու ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները և մշակելու կառուցակերգեր՝ ուղղված այդ հիմնախնդիրների լուծմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ներկայիս մակարդակը, դուրս բերել ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները և առաջ քաշել կառուցակարգեր, որոնք կարող են նպաստել ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործմանը և հիմնախնդիրների լուծմանը: Նշյալ նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունը և հիմնական առանձնահատկությունները,
2. մշակել մոդել, որի կիրառմամբ, վիճակագրության առկայության պայմաններում, հնարավոր կլինի դինամիկ կերպով չափել տարբեր երկրների տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը, ինչպես նաև կիրառել նշյալ մոդելը մի շարք երկրների համար,
3. ուսումնասիրել տարածքային զարգացման անհամաչափությունների միջազգային փորձը և առանձնացնել այն երկրները, որոնց տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն նվազման միտում, ինչը թույլ կտա նման հաջող փորձ ունեցող երկրների տարածքային քաղաքականությունների ուսումնասիրությամբ որոշակի տարրեր տեղայնացնել ՀՀ-ում,
4. ուսումնասիրել ՀՀ տարածքային քաղաքականությունը, տարածքային զարգացման համապետական, մարզային և համայնքային ռազմավարություններն ու ծրագրերը՝ բացահայտելով դրանցում առկա հիմնախնդիրները և այն ուժեղ կողմերը, որոնց հիման վրա հնարավոր կլինի ապահովել քաղաքականության կատարելագործում,
5. իրականացնել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատում, որը կհիմնվի ինչպես ցուցանիշների դինամիկ և կառուցվածքային ուսումնասիրության, այնպես էլ մոդելային գնահատումների վրա,
6. հետազոտել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, ինչպես նաև գնահատել, թե որքանով են համայնքների

ֆինանսական կարողությունները բխում ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացում ապահովելու գաղափարախոսությունից,

7. մշակել կառուցակարգեր, որոնք կնպաստեն համայնքների ֆինանսական կարողությունների բարելավմանը, կհանգեցնեն ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացման և ուղղված կլինեն ՀՀ տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելուն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Գիտական նորույթ պարունակվում է հետազոտության հետևյալ արդյունքներում՝

1. Սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող թվով 9 ցուցանիշների և փորձագիտական գնահատում-հարցումների հիման վրա մշակվել է երկրների տարածքային միավորների զարգացման ինդեքսների և տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել, որը հեղինակի կողմից կիրառվել է թվով 16 երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար (2012-2021 թթ. տվյալներով):
2. ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների որակական և քանակական գնահատման համար հեղինակի կողմից մշակվել և առաջարկվել է մոդել, որը հիմնված է թվով 19 ցուցանիշների և SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ գործոնային վերլուծության վրա (2021 թ. տվյալներով):
3. ՀՀ համայնքների բյուջետային կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության բացահայտման նպատակով մշակվել է մեթոդաբանություն՝ հիմնված քվանտիլային խմբերի կիրառման ու արդյունքների համադրման վրա:
4. Մշակվել են համայնքների ֆինանսական կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության ապահովմանն ուղղված կառուցակարգեր, այդ թվում՝ ներկայացվել են դոտացիաների հաշվարկման և

եկամտային հարկից ու շահութահարկից մասհանումների իրականացման մոդելներ, տրվել են դրանց արդյունավետության գնահատականները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է գիտական հետազոտության նպատակով, խնդիրներով և տրամաբանությամբ: Ատենախոսությունը շարադրված է 178 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, ներառում է 41 գծապատկեր և 30 աղյուսակ:

«Ներածության» մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված հիմնական արդյունքները և գիտական նորույթը, ինչպես նաև ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսության տարածքային զարգացման հիմքերն ու հիմնակնա բնութագրերը»** գլխում ուսումնասիրվել են տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունն ու հիմնական բնութագրիչները: Այս գլխի շրջանակներում մշակվել է տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել, որը կիրառվել է աշխարհի 15 երկրների համար, իսկ հաջող փորձ ունեցող երկրների տարածքային քաղաքականությունները համարվել են էտալոնային, որոնց մասով կատարվել է առանձին վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ տարածքային զարգացման հիմնական առանձնահատկությունները»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ տարածքային քաղաքականության օրենսդրահիրավական հիմքերը, գնահատվել է ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը, ինչպես նաև դիտարկվել է ՀՀ-ում լիազորությունների և ֆինանսական ապակենտրոնացումը՝ իր բոլոր բնութագրիչներով:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման մոտեցումները»** գլխում ատենախոսի կողմից առաջարկվել են մոտեցումներ, որոնք միտված են տարածքային զարգացման ֆինանսական կառուցակարգերի կատարելագործմանը և բուն քաղաքականության բովանդակային ու ձևական բարելավմանը:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից հիմնականներն են.

1. Ատենախոսության շրջանակում հեղինակն անդրադարձ չի կատարել խնդրի առնչությամբ հայ գիտնականների աշխատություններին: Աշխատանքում բացակայում է խնդրի մշակվածության վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը:
2. Աշխատանքը ծանրաբեռնված է 2 տասնյակ երկրների տարածքային անհամաչափությունների վերացմանն ուղղված քաղաքականությունների նկարագրությամբ, իսկ աշխատանքի վերջին ենթագլխում մի քանի ընդհանրացված նախադասությամբ նշվում է միայն մի քանի երկրների փորձը և ասվում է, որ դրանք կարելի է կիրառել ՀՀ-ում: Մեր կարծիքով, հիմնավորված չեն երկրների ընտրությունը ՀՀ-ի հետ համեմատականներ անցկացնելու տեսանկյունից:
3. Ատենախոսության 1.1. ենթագլուխը *(«Տարածքային համաչափ զարգացման էությունը և դրա տեսամեթոդական հիմքերը»)* ծավալով փոքր է: Հեղինակը կարող էր ենթագլխում ավելի խորությամբ անդրադառնալ տարածքային

անհամաչափությունը պայմանավորող գործոններին և տնտեսության զարգացման վրա դրանց ազդեցության կառուցակարգերին:

4. Ատենախոսության տարբեր հատվածներում իրականացված վերլուծությունների համար դիտարկվել է 2012-2021թթ. ընկած ժամանակահատվածը: ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունները գնահատելիս (ենթագլուխ 2.2) հեղինակը կարող էր օգտվել ավելի թարմ վիճակագրական տվյալներից:
5. Ատենախոսության էջ 85-ում, խոսելով կրթական ծառայությունների հասանելիության գնահատման մասին, հեղինակը որպես ցուցանիշ դիտարկել է միայն հանրակրթական հաստատությունների մանկավարժական անձնակազմի թվաքանակը՝ հաշվարկված 10 հազար բնակչի հաշվով, անտեսվել է բուհական կրթության հասանելիության դիտարկումը և նաև կրթության հասանելիության վրա ազդող այլ ցուցանիշները: Էջ 86-ում բժշկական ծառայությունների հասանելիություն գնահատելիս նույն միտումն է նկատվում, ինպես որ կրթության հասանելիությունը դիտարկելիս, ներկայացված է միայն մեկ ցուցանիշ՝ 10 հազար բնակչի հաշվով բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակը:
6. Հղումները կանոնակարգված չեն: Շատ են նույն աղբյուրին արված պարբերական հղումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալում են, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և արտացոլում հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ Գագիկ Զարմավիրի Բաղադյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա. Հ. Հակոբջանյան

Գրախոսներ՝

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի պրոֆեսոր,
տ.գ.թ.՝ Ա. Հ. Համբարձումյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի ասիստենտ,
տ.գ.թ.՝ Կ. Հ. Թոմիկյան

Ա.Հ. Հակոբջանյանի, Ա.Հ. Համբարձումյանի, Կ.Հ. Թոմիկյանի ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան